

Հաստատված է՝ \_\_\_\_\_

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 2017 թվականի

օգոստոսի 29-ի նիստում

ռեկտոր Մուշեղ Ասատրաբեկյան

(ստորագրություն)



**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ**

**ԱՄԲԻՈՆԻ**

(վերահաստատված)

Հաստատված է՝ \_\_\_\_\_

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 2017 թվականի

օգոստոսի 29-ի նիստում

ռեկտոր Սուշեղ Աստարացյան

(ստորագրություն)



## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

### ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

#### ԱՄԲԻՈՆԻ

#### I. Ընդհանուր դրույթներ

1. Ամբիոնը հանդիսանում է բուհի (ֆակուլտետի) հիմնական ուսումնագիտական միավորը: Ամբիոնը իրականացնում է ուսումնական, գիտական, մեթոդական, դաստիարակչական աշխատանք՝ ուսանողների շրջանում մեկ կամ մի քանի հարակից առարկաների գծով, ինչպես նաև պատրաստում է նաև գիտամանկավարժական կադրեր:
2. Ամբիոնը ղեկավարում է ամբիոնի վարիչը, որը որպես կանոն, ունի պրոֆեսորի կոչում կամ դոկտորի գիտական աստիճան: Ամբիոնի վարիչի ընտրությունը, նշանակումը իրականացվում է ՀԲԻ-ի կանոնադրության համաձայն:
3. Ամբիոնի կազմի մեջ մտնում են՝ պրոֆեսորներ, դոցենտներ, ասիստենտներ, ավագ դասախոսներ, դասախոսներ, ավագ և կրտսեր լաբորանտներ, կաբինետի լաբորատորիայի վարիչներ:

#### II. Ամբիոնի գործունեությունը:

4. Բարձր գիտա- մեթոդական մակարդակով իրականացնել դասախոսություններ, սեմինար, գործնական, լաբորատոր պարապմունքներ, որոնք հաստատված են ինստիտուտի ուսումնական պլանով, ինչպես նաև ստուգարքների և քննությունների կազմակերպում և իրականացում:
5. Դաստիարակչական աշխատանք ուսանողների շրջանում:
6. Ուսանողական ծրագրերի մշակում կատարելագործում պետական չափորոշիչներին համաձայն:
7. Դասագրքերի, ուսումնական մեթոդական ձեռնարկների տարբեր դիտակտիկ նյութերի, մշակում և ստեղծում:
8. Ուսանողների առարկայական կրթության որակի չափման միջոցների մշակում:
9. Ուսանողների շրջանում գիտահետազոտական աշխատանքների կազմակերպում և կառավարում:
10. Ամբիոնի աշխատակից դասախոսների ուսումնական, գիտական մեթոդական, դաստիարակչական ծրագրերի քննարկում: Լավագույն, փերձառու դասախոսների փորձի տարածում: Երիտասարդ դասախոսների օժանդակում, պատրաստում, մանկավարժական վարպետության տիրապետման գործում:
11. Գիտամանկավարժական կադրերի ձևավորում:
12. Աշխատանքային կապերի ձևավորում այլ բուհերի ամբիոնների հետ: Գիտա-մանկավարժական փորձի փոխանակում, ընդանրացում:

13. Կապերի հաստատում շրջանավարտների հետ:
14. Ամբիոնի գիտա-մանկավարժական կազմի մասնակցության ապահովում գիտաժողովներին, սեմինարներին, սիմպոզիումներին և այլն:
15. Ամբիոնի աշխատակիցների վերապատրաստումների որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպում:
16. Ինստիտուտի գիտական խորհրդին առաջադրում, պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչմանը արժանի թեկնածուներ: Ռեկտորատի խրախուսմանը առաջադրում /պատվոգիր, շնորհակալագիր և այլն/ արժանի թեկնածուներ:
17. Ամբիոնը ստեղծվում և լուծարվում է ռեկտորի հրամանով գիտական խորհրդի որոշմամբ և հիմնադիր խորհրդի հավանությամբ:
18. Ամբիոնի կազմում պետք է լինեն 5 աշխատակիցներ / դասախոսներ/, որոնցից առնվազն 2-ը պետք է ունենան գիտամանկավարժական կոչումներ: Բացառիկ դեպքերում ամբիոնը կարող է բաղկացած լինել 3-4 մասնագետներից:
19. Ամբիոնի աշխատանքներին կարող են ներգրավվել որպես համատեղողներ ճանաչված մասնագետներ այլ բուհերից և գրտահետազոտական ինստիտուտներից:

## **ՀԲԻ-Ի ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

### **I. Ընդհանուր դրույթներ**

20. Ամբիոնի վարիչները ներգավվում են ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմում:
21. Ամբիոնի վարիչի պաշտոնին կարող է ընտրվել բարձրագույն կրթության և գիտամանկավարժական աշխատանքի և պրակտիկ գործունեության փորձ ունեցող անձը, որն ունի գիտական աստիճան կամ կոչում / որպես կանոն գիտությունների դոկտորի կամ պրոֆեսորի, գիտությունների թեկնածուի կամ դոցենտի տվյալ ամբիոնի ուղղվածությամբ/:
22. Ամբիոնի գործունեությունը իր իրավասության սահմաններում Վրիչը կազմակերպում և ղեկավարում է 5 տարի ժամկետով:
23. Ամբիոնի վարիչը ընտրվում է ՀԲԻ-ի գիտական խորհրդի նիստում, պաշտոնին հրամանագրվում է ՀԲԻ-ի ռեկտորի կողմից:

### **II. Ամբիոնի վարիչի թեկնածուների առաջադրումը:**

24. ՀԲԻ-ի ռեկտորատում քննարկում է ամբիոնի վարիչի թափուր պաշտոնատեղի համար թեկնածություններ տվյալ մասնագիտության ուղղվածությամբ հանրապետության առաջատար, հեղինակավոր մասնագետների: Նրանցից համաձայնություն ստանալուց հետո ամբիոնի վարիչի թեկնածությունը/ կամ թեկնածությունները/ դրվում են ինստիտուտի գիտական խորհրդի քննարկման և հաստատման:
25. Ամբիոնի վարիչի թափուր աշխատատեղի մրցույթի վերաբերյալ հայտարարությունը տրվում թ հանրապետական մամուլը, ուր նշվում է հավակնորդին ներկայացվող պահանջները, փաստաթղթերի ներկայացման ժամկետը՝ հայտարարության հրապարակումից հետո 30 օրվա ընթացքում:

## **ՀԲԻ-Ի ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

### **I. Ընդհանուր դրույթներ**

26. Ամբիոնի աշխատակիցների (ասիստենտ, դասախոս, ավագ լաբորանտ, դոցենտ) ընտրության կադրերի ճիշտ տեղաբաշխման խնդիրը ըստ նրանց մասնագիտական որակավորման, տարիքի, ինստիտուտում մտնում է ամբիոնի վարիչի լիազորությունների մեջ:
27. Ինստիտուտի հիմնադիր խորհուրդը, ղեկանատը ամբիոնի վարիչին կարող են առաջադրել մասնագետի:
28. Ամբիոնի պրոֆեսորի ընտրությունը իրականացվում է մրցույթային կարգով գիտական խորհրդի կողմից: Թափուր պաշտոններին հրավիրված թեկնածուներին կարող է առաջարկվել կարգալ փորձնական դասախոսություն կամ սեմինար կամ գործնական պարապմունք: Ընտրված

մասնագետի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր որի ժամկետները հաստատվում են կողմեր փոխադարձ համաձայնությամբ:

29. Աշխատանքային պայմանագիրը կազմվում է 2 օրինակից և ստորագրվում է կողմերի կողմից: Աշխատանքային պայմանագրի մեկ օրինակը տրվում է աշխատակցին, մյուսը պահվում է կադրերի բաժնում: Աշխատանքային պայմանագրի հանձնման ժամանակաշխատակիցն նա կադրերի բաժնում պահվող օրինակի վրա ստորագրում է, որ ստացել է օրինակը:
30. Վեճերը և անհամաձայնությունները կապված աշխատանքային պայմանագրի հետ կարգավորվում է աշխատանքի վերաբերյալ գործող օրենսդրությամբ:
31. Ուսումնական տարվա ավարտից 2 ամիս շուտ ինստիտուտի ռեկտորը հրապարակում է աշխատակիցերի ազգանունները, որոնց աշխատանքային պայմանագրերը այդ ուսումնական տարում ավարտվում են: Ազատված պաշտոնների համար ռեկտորը կարող է ընդունել նոր աշխատակից կամ երկարաձգել աշխատանքային պայմանագիրը:
32. Ինստիտուտի ղեկավարությունը (աշխատանքային պայմանագրում նախատեսված կարգով) կարող է վաղաժամկետ խզել աշխատանքային պայմանագիրը դասախոսի հետ, եթե նա իր պրոֆեսիոնալ բարոյահոգեբանական հատկանիշներով չի համապատասխանում ինստիտուտի պահանջներին:
33. Ինստիտուտի դասախոսական գործունեության պաշտոնի հավակնորդը պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝
  - 1) Դիմում ռեկտորի անունով
  - 2) Բարձրագույն կրթության դիպլոմ
  - 3) Փաստաթղթեր գիտական աստիճանի և գիտական կոչման մասին
  - 4) Աշխատանքային գրքույկի պատճեն
  - 5) Հրատարակված գիտա-մանկավարժական աշխատանքների ցուցակ
  - 6) Ինքնակենսագրություն
  - 7) Վերընտրվելու դեպքում ամբիոնի վարիչի կողմից տրված երաշխավորագիր: